ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2017 թվականի N 198 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 684-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի «Սելեկցիոն նվաճման լիցենզային պայմանագրի գրանցման կարգը սահմանելու մասին» N 684-Ն որոշմամբ սահմանված՝ սելեկցիոն նվաճման լիցենզային պայմանագրի գրանցման կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 9-րդ կետում՝

ա. «ա» ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

բ. «գ» ենթակետում «լիազորված մարմնում գրանցված հավատարմատարի միջոցով» բառերը փոխարինել «սույն կարգի 3-րդ կետում նշված անձանց ներկայացուցչի միջոցով» բառերով,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Դիմումը կարող է լիազորված մարմին ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային եղանակով՝ լիազորված մարմնի պաշտոնական կայքի միջոցով:».

2) 10-րդ կետում «եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, իսկ «մեկամսյա ժամկետում» բառերը՝ «տասն աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

3) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Պայմանագիրը գրանցելու մասին որոշման ընդունումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այն գրանցվում է սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանում և հրապարակվում «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված ժամկետներում:».

4) 17-րդ կետը «մարմնին, որը» բառերից հետո լրացնել «որոշման մասին տեղեկանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, իսկ «սելեկցիոն նվաճումների պաշտոնական տեղեկագրում» բառերը փոխարինել «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված ժամկետներում» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. մարտի 3
Երևան